

ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Սառնա ՍՊԸ-ն ՉՀ-ԷԱՃԱՊԶԲ-2026/1 ծածկագրով կազմակերպված Էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում
Ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
59	59 Տավարի միս, ոսկրոտ Միս տավարի պաղեցրած, զուտ մսի տեսակարար կշիռը ընդհանուր քաշի ոչ պակաս քան 60 %-ը, զարգացած մկաններով, պահված 0-ից մինչև 120C ջերմաստիճանի պայմաններում: Առանց կողմնակի հոտերի, թարմ: Փափեթավորումը՝ արկղերով: Պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս քան 60 %: Միսը պետք է լինի բացառապես սպանդանոցային ծագման և ուղեկցվի անասնաբուժական ուղեկցող համապատասխան փաստաթղթով (Ձև 5), որը պետք է հանձնվի Նախադպրոցական ուսումնական հաստատությանը ապրանքի մատակարարման ժամանակ: Տավարի սպանդից գոյացած կենդանական ծագման մթերքի վրա պետք է դրոշմված լինի միայն թիվ 5 ձևի անասնաբուժական վկայականի համարով դրոշմը, որը դրվում է մեկական՝ թիակի, կողոսկրի և ազդրի հատվածում, դրոշմումը պետք է լինի հստակ, ընթեռնելի և պահպանվի մսի պահման ժամանակ, ինչպես նաև դրոշմման համար օգտագործվում են միայն սննդային ներկեր: ՀՍՏ 342-2011 կամ ԳՕՍՏ 31797-2012 կամ համարժեք: Անվտանգությունը փաթեթավորումը, մակնշումը և նույնականացումը՝ համաձայն Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2013 թվականի հոկտեմբերի 9-ի թիվ 68 որոշմամբ ընդունված «Մսի և մսամթերքի անվտանգության մասին» (ՄՍ ՏԿ 034/2013), Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 880 որոշմամբ ընդունված «Սննդամթերքի անվտանգության մասին» (ՄՍ ՏԿ N 021/2011), Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 881 որոշմամբ ընդունված «Սննդամթերքը՝ դրա մակնշման մասով» (ՄՍ ՏԿ N 022/2011), Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի օգոստոսի 16-ի թիվ 769 որոշմամբ ընդունված «Փաթեթվածքի

անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 005/2011) տեխնիկական կանոնակարգերի: Մատակարարումն իրականացվում է առնվազն շաբաթական մեկ անգամ: Պահանջագիրը Վաճառողին տրամադրվում է յուրաքանչյուր մատակարարումից առնվազն 2 (երկու) աշխատանքային օր առաջ: Պահանջագիրը Վաճառողին տրամադրվում է էլեկտրոնային փոստի կամ կապի այլ միջոցներով: Մատակարարումն իրականացվում է աշխատանքային օրվա ժամը 08:30-09:00 ընկած ժամանակահատվածում՝ համապատասխան մանկապարտեզներ նշված հասցեներով:

Սննդամթերքի փոխադրումը տրանսպորտային միջոցներով իրականացնելիս պետք է ապահովել հետևյալ պայմանները՝ տրանսպորտային միջոցների բեռնային բաժանմունքների և բեռնարկղերի կառուցվածքը պետք է ապահովված լինի աղտոտումից, կենդանիների, այդ թվում՝ կրծողների և միջատների ներթափանցումից, տրանսպորտային միջոցների բեռնային բաժանմունքների և բեռնարկղերի ներքին մակերևույթը պետք է պատրաստված լինի լվացվող և ոչ թունավոր նյութերից և պետք է պարբերաբար ենթարկվի անհրաժեշտ մաքրման, լվացման և ախտահանման: Առաքողները պետք է ապահովված լինեն սանիտարական արտահագուստով (խալաթ և ձեռնոցներ): Տեխնիկական բնութագրին կամ մատակարարման պայմաններին անհամապատասխանությունն ի հայտ գալու դեպքում անհամապատասխանության շտկման ժամկետ է սահմանվում 60 րոպե: Մատակարարումը կատարվում է Վաճառողի միջոցների հաշվին՝ համապատասխան մանկապարտեզներ նշված հասցեներով՝ ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության պետի 2017 թվականի «Սննդամթերք տեղափոխող փոխադրամիջոցների համար սանիտարական անձնագրի տրամադրման կարգը և սանիտարական անձնագրի օրինակելի ձևը հաստատելու մասին» թիվ 85-Ն հրամանով հաստատված սննդամթերքի տեղափոխման համար նախատեսված տրանսպորտային միջոցներով: Ապրանքատեսակի նշված ծավալը առավելագույնն է, այն կարող է նվազեցվել Գնորդի կողմից, հաշվի առնելով տարվա ընթացքում մանկապարտեզ հաճախող երեխաների փաստացի թվաքանակը և ֆինանսավորումը կիրականացվի փաստացի մատակարարված ապրանքի մասով: Գնորդի հայացողությամբ պայմանագրի գործողության ողջ ժամանակահատվածում ցանկացած մատակարարված խմբաքանակից վերցված փորձանմուշ կարող է մինչև չորս անգամ ուղարկվել փորձաքննության, որը կիրականացվի Գնորդի նախընտրած փորձաքննություն իրականացնող կազմակերպության կողմից:

Իրականացված փորձաքննության դիմաց վճարումներն իրականացվում են Վաճառողի կողմից:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ООО САРНА в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом 22-ЕЦДЦП2Р-2026/1 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
59	-